



**ՀԱՐՁԱԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՍ
ՄՈՏՈՑԻԿԼԵՏՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՎ ՄՈՏՈՑԻԿԼԱՎԱՐՆԵՐԻ ԿՅԱՆՔԸ
ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ)**

Առաջարկությունների նպատակն է գրոհային ստորաբաժանումների մոտոցիկլետավարներին ծանոթացնել զորքերին մատակարարվող սպորտային մոտոցիկլետների (պիտբայքերի / pitbike/) վարման տեսական և գործնական հիմունքներին և ընդհանուր դրույթներին, որոնք անհրաժեշտ են ռազմական գործողությունների նախապատրաստման և վարման ընթացքում զինծառայողների կյանքի ու առողջության պահպանման համար:

Սպորտային մոտոցիկլետը վթարայնության բարձր ռիսկ ունեցող տրանսպորտային միջոց է, որը նախատեսված է արտաճանապարհային (կտրտված տեղանքով) երթևեկելու համար:

1. Ընդհանուր դրույթներ

Որպես կանոն, օգտագործվում են տարբեր տիպի մոդիֆիկացիայի սպորտային մոտոցիկլետներ.

- «ZUUMAV» ապրանքանիշի «Էնդուրո» պիտքայք;
- Dirtbike « APAQ »: Մոդելներ 150 CC, 200 CC, 250CC;
- մոտոկրոսային K1, K2, T2, T3, KT, SV, TX մոդելների «KAYO» մոտոցիկլետներ;
- մոտոկրոսային «JHL» մոդելների S, SX, EL մոտոցիկլետներ և այլն:

Սպորտային մոտոցիկլետի մասերի և մեխանիզմների տեղաբաշխումը



Նկ.1. Մոտոցիկլ JHL SX150 տեսքը

1. լուսարձակ; 2. վառելիքի բաք; 3. վառելիքի ծորակ; 4. նստատեղ; 5. կուտակիչ մարտկոց (ծածկի հետևում) 6. հետնի բեռնախցիկ; 7. առջևի արգելակային սկավառակ; 8. առջևի արգելակային ստուպորտ; 9. փոխանցումների փոխարկման լծակ; 10. վարորդի ոտնատեղ; 11. կողային կախոց; 12. շարժաբեր շղթա; 13. ուղևորի ոտնատեղ; 14. շղթայի որսիչ; 15. հետնամասային աստղանիվ; 16. շահագործման հրահանգներ; 17. վառոցքի բանալիներ; 18. պահեստային գործիքներ և պարագաներ:

2. Ռազմադաշտում հիմնական սպառնալիքների նկարագրությունը և վարելու հիմունքները

Մոտոցիկլետավարները դիպուկահարների և FPV դրոնների օպերատորների առաջնային թիրախն են: Գոյատևելու համար անհրաժեշտ է տիրապետել առավելա-

գույն արագությամբ տեղաշարժվելու հմտություններին: Մշտապես տեղաշարժվել ցրված, ընտրելով նոր երթուղիներ:



Նկ.2. Մոտոցիկլետավարին ոչնչացնելու ժամանակակից միջոցները

1. Բարձր ճշգրտության զինամթերք; 2. կասետային զինամթերք 3. հետախուզական դրոններ; 4. հրկիզող և թունավոր նյութեր կրող դրոններ; 5. բեկորային նռնակներ կրող դրոններ; 6. դրոն-«կամիկադեներ»; 7. մետաղական արգելապատնեշներ; 8. ուղղորդող գործողությունների ականներ; 9. սեղմման գործողության ականներ; 10. տրիբուլաներ¹; 11. ականանետային հաշվարկների կրակ; 12. դիպուկահար կրակ:

Մոտոցիկլետի հիմնական խոչընդոտները ռազմադաշտում

Ժամանակակից մարտական պայմաններում մոտոցիկլետը կիրառվում է որպես հանկարծակի գրոհ, շրջապատում իրականացնելու, թշնամու շենքերն ու ամրաշինությունները ոչնչացնելու նպատակով TM-62 տիպի հակատանկային ականներ հասցնելու միջոց:


Մարտական գործողությունների վարման ժամանակ սպորտային մոտոցիկլետի (pitbike) վարորդ կարող է լինել ցանկացած զինծառայող, ով ունի վարորդական հմտություններ, կատարում է թշնամու դիրքերը գրոհելու համար սահմանված մարտական առաքելությունը:

Ոչնչացման ենթակա օբյեկտի ճանապարհին մոտոցիկլետավարը կարող է հանդիպել արհեստական և բնական խոչընդոտների:

¹ Տրիբուլա- երկաթե կոն (գունդ)՝ չորս սուր եռանկյունաձև ցցերով կամ պարզապես չորս իրար միացված ցցերով:

Արհեստական խոչընդոտները ներառում են.

խրամատներ, խրամուղիներ, փոսեր, անտառային փլատակներ, հակահետևակային ականներ, արգելապատնեշներ, լուսային թակարդներ, առձգիչներ, տրիբոլներ, աննկատ մետաղական արգելափակոցներ, փշալարեր, ձգվող կապրոնե և մետաղական ճոպաններ, պաշտպանական կառույցների մուտքի հատվածներում թափված շինարարական կամ կենցաղային աղբ (կոտրված աղյուսներ, ցանկապատերի մնացորդներ, շշերի և ապակիների բեկորներ, ծոմոված մեխեր), ջրածածկ փոսեր, հողաթմբեր և այլն:



Նկ. 3. Արհեստական խոչընդոտի օրինակ (առձգիչ)

Բնական խոչընդոտները ներառում են.

գառիթափ վերելքներ և վայրէջքներ, ավազոտ և ճահճոտ տարածքներ, առուներ, կիրճեր, թփեր, անտառներ, գետեր և այլն:



Նկ. 4. Բնական խոչընդոտների օրինակ՝ փշատերև անտառ և թփեր

Մոտոցիկլ վարելու հիմունքները

Մոտոցիկլային զննում

Մարտական առաջադրանքը կատարելուց առաջ, որպես կանոն, ստուգվում է:

- անիվները, ստուպորտները, ճոճանակը, շարժիչը;
- դեկապյունակները (պետք է լինեն անշարժ և ապահով ամրացված, դեկը պետք է ազատ պտտվի);
- ճնշումը անվադողերում (կարգավորվում է ըստ անհրաժեշտության), անվադողերի կամ շյուղերի վնասման նշանների հայտնաբերման դեպքում դրանք փոխարինվում կամ վերանորոգվում են;
- աշխատանքային հեղուկները (շարժիչի յուղի և բենզինով լիցքավորման մակարդակը, վնասվածքների և արտահոսքերի բացակայությունը);

- շարժաբեր (հաղորդակ) շղթայի ձգվածության ու ամբողջականության վիճակը;
- կողային ոտնակի ամրացվածության վիճակը;
- կառավարման վահանակի և լուսային ազդանշանային համակարգի, դեկի վրա անջատիչների ցուցիչների, ձայնային ազդանշանի, շարժիչի անջատման կոճակի ճիշտ աշխատանքը;
- ամոռնիզատորների (մեղմիչների) աշխատանքը, երբ սեղմվում են սեփական քաշով;
- հայելիների ցուցադրման կարգավորումը (օբյեկտները պետք է հստակ տեսանելի լինեն 4 մետր լայնությամբ 10 մետր հետնամասի սահմաններում);
- գազի բռնակի (արագացուցիչի) ազատ ընթացքը, ավտոմատ վերադարձը մեկնարկային դիրքի;
- մոտոցիկլի հետևի և առջևի արգելակների աշխատանքի վիճակը;
- ուղեբեռի ամրացման հնարավորությունը:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ: Փոխադրվող ուղեբեռի զանգվածը, որը հագեցած է զենքով, կապի միջոցներով, զինամթերքով և սննդի չափաբաժնով, չպետք է գերազանցի 150 կգ-ը:

Ուղեբեռի քաշը պետք է հավասարաչափ բաշխվի մոտոցիկլետի երկու կողմերում և չպետք է շատ դուրս գա մոտոցիկլետի ուրվագծերից այն կողմ:

ԱՐԳԵԼՎՈՒՄ Է ծանր և մեծածավալ ուղեբեռի փոխադրումը:

ԳԵՐԾԱՆՐԱԲԵՈՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ բացասաբար է ազդում մոտոցիկլետի արգելակման արդյունավետության, կառավարման և շարժիչի հզորության վրա, նվազեցնում է մարտավարական և տեխնիկական բնութագրերը:

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻՆ ՉՀԵՏԵՎԵԼԸ անխուսափելիորեն հանգեցնելու է վաղաժամ խափանումների, շարժիչի և կախոցի բաղադրիչների անվտանգության սահմանների նվազեցմանը, անվադողերի մաշվածությանն ու մոտոցիկլետի ծառայության ժամկետի կրճատմանը:

ՎԱՐԵՔ մոտոցիկլը միայն առանձին, փակ տարածքում կամ մրցուղում կայուն հմտություններ ձեռք բերելուց հետո:

ՄԱՐԶՎԵՔ անվտանգ տարածքում ցածր արագությամբ վարելով մինչև ձեռք կրերեք անհրաժեշտ հմտություններ:

ԴԻՄԵՔ փորձառու հրահանգչի կամ վարորդի օգնությամբ:

Մոտոցիկլետի սպասարկում

Մարտական առաջադրանք կատարելիս մոտոցիկլետի ոչ պատշաճ տեխնիկական սպասարկումը կամ անուշադրության մատնված անսարքությունը կարող է վթարի, վնասվածքի կամ վարորդի մահվան պատճառ դառնալ:

Տեխնիկական սպասարկման աշխատանքները ժամանակին և ճիշտ կատարելու համար յուրաքանչյուր սպորտային մոտոցիկլետի (pitbike) հավաքածուն ունի «շահագործման ձեռնարկ»: Այս ձեռնարկում դուք կարողեք սովորել, թե ինչպես ճիշտ կատարել տեխնիկական սպասարկման աշխատանքները:

Մոտոցիկլը օգտագործելուց հետո մաքրեք կեղտից ու փոշուց: Լվանալու ժամանակ կարող եք օգտագործել աման լվացող հեղուկ և սպունգ: Մի օգտագործեք մետաղական խոզանակ անիվների շրջանակը և շյուղերը մաքրելու համար, քանի որ դա կարող է վնասել մակերեսը: Լվանալուց հետո անպայման սրբեք մոտոցիկլը շորով

կամ փափուկ սրբիչով և յուղեք շարժաբեր շղթան: Յուղը կկանխի շղթայի վաղաժամ կոռոզիան: Մոտոցիկլը տարերքներից պաշտպանելու համար օգտագործեք ջրակայուն ծածկ:


Նստեցում

Վարման դասընթացներում սպորտային մոտոցիկլետի վարորդը նախ պետք է վարժվի ճիշտ նստեցման դիրք ընդունելուն:

Մարմինը պետք է լինի մի փոքր առաջ թեքված, արմունկները՝ մի փոքր ծալված, ոտքերը՝ հորիզոնական դիրքով ոտնակների վրա, իսկ ծնկները՝ վառելիքի բաքին սեղմված:

Թեքված դիրքը նվազեցնում է օդի դիմադրողականությունը, իջեցնում ծանրության կենտրոնը և մեծացնում մոտոցիկլետի կայունությունը բարձր արագությունների դեպքում:

Կան երկու տեսակի շրջադարձային դիրքեր. առաջինը՝ երբ վարորդը և մոտոցիկլետը գտնվում են նույն հարթության վրա, բայց մի փոքր թեքված են, երկրորդը՝ երբ վարորդը նստած է ուղղահայաց, իսկ մոտոցիկլետը՝ թեքված:



Նկ. 5. Մոտոցիկլետավարի նստեցման տարբերակներ

ա. թեք նստեցում; բ. վարորդը և մոտոցիկլետը նույն հարթության վրա են, գ. վարորդը նստած է ուղիղ, իսկ մոտոցիկլետը թեքված է դեպի շրջադարձը:

Տեղից շարժվել և կանգ առնել

Շարժիչը տաքացնելուց հետո նստել թամբին (ոտքերը հենելով գետնին), սեղմել կցորդիչը, այնուհետև միացնել առաջին փոխանցումը, դեկի աջ կողմում գտնվող «գազի» բռնակը պտտելով դեպի ձեզ (դեպի ներս) դանդաղ ավելացնել այրվող խառնուրդի մատակարարումը և միաժամանակ սահուն բաց թողնել կցորդիչի լծակը: Մոտոցիկլետը պետք է շարժվի առանց ցնցումների:

ՀԻՇԵՔ: Կտրուկ մեկնարկը հանգեցնելու է հետևի անիվի տեղապատմանը և ուժային փոխանցման համակարգի վաղաժամ մաշվածությանը:

Կանգառից առաջ անհրաժեշտ է նվազեցնել դեկի վրա գտնվող գազի բռնակի պտույտները, անջատել կցորդիչը և արգելակել մոտոցիկլետը: Կանգառից հետո ոտքը դնել գետնին:

Փոխանցիչի փոխարկում (Переключение передач)

Երբ մոտոցիկլետը զարգացնում է բավարար արագություն, կատարվում է հաջորդական փոխանցիչի փոխարկում: Դա արվում է այն բանից հետո, երբ շարժիչի պտույտները մեծանում են, որից հետո գազի բռնակի սեղմումը թողնում են, սեղմվում է կցորդիչը, և կարճատև դադարից հետո կատարվում է փոխանցիչի փոխարկում:

Միացման ընթացքում կարճատև դադարը հնարավորություն է տալիս հավասարեցնել ներգրավված փոխանցումների շրջագծային արագությունները, ինչը այն դարձնում է անաղմուկ:

Ավելի բարձր փոխանցումից ավելի ցածր փոխանցման անցնելիս անհրաժեշտ է միացնել կցորդիչը և որոշ ժամանակ անց (սովորաբար ավելի երկար, քան ցածր փոխանցումից ավելի բարձր փոխանցման ժամանակ) ընտրել փոխանցումը:

Եթե ավելի ցածր փոխանցման անցնելու համար անհրաժեշտ արագությունը չափազանց բարձր է, այն պետք է նվազեցնել արգելակելով:

Ճիշտ փոխանցման դեպքում մեխանիզմներից կամ լիսեռներից աղմուկ չպետք է լինի:

Արգելակման համակարգի աշխատանքը և արգելակների ճիշտ օգտագործումը

Սպորտային մոտոցիկլետները հաճեցած են առջևի և հետևի անիվների հիդրավլիկ սկավառակների արգելակներով: Արգելակային համակարգի շահագործման մեջ օգտագործվում է DOT 4 ստանդարտի հեղուկ: Արգելակման հեղուկի ռեգերվուարները ներկառուցված են առջևի և հետևի արգելակային բալոնների մեջ: Առջևի արգելակային համակարգի արդյունավետությունը 70% է, հետևինը՝ 30%:

ԿԱՐԵՎՈՐ Է: Արտաճանապարհային տեղանքում վարելիս նախընտրելի է օգտագործել հետևի արգելակները, քանի որ առջևի արգելակի վրա ավելորդ ուժի գործադրումը կարող է հանգեցնել անիվի և ճանապարհի շաղկապվածության կորստին:

Արգելակի խողովակ, ստուպորտ կամ գլխավոր գլան, արտահոսքի պատճառով, թափանցած օդը կնվազեցնի արգելակման արդյունավետությունը:

Եթե արգելակի լծակը և ոտնակը փափկել և դարձել է սպունգանման, ապա օդ է թափանցել, և անհրաժեշտ է թափանցած օդի պոմպում:

Արգելակի կոճղակների մաշվածության արագությունը կախված է վարման ոճից և ճանապարհի պայմաններից: Կոճղակներն ավելի արագ են մաշվում թաց և ցեխոտ ճանապարհներին:

Արգելակային կոճղակների արագ մաշվածությունը նվազեցնելու համար կանգ առեք սահուն՝ վաղաժամ բաց թողնելով գազի բռնակը, արգելակման ավարտին անջատելով կցորդիչը միաժամանակ օգտագործելով առջևի և հետևի արգելակները:

Արտակարգ իրավիճակում արգելակումը պետք է լինի անհապաղ:

Արտակարգ արգելակման ժամանակ արգելակեք կցորդիչը միացված վիճակում, բայց միշտ միաժամանակ օգտագործելով երկու արգելակները:

Շարժիչի և արգելակների արգելակման այս մեթոդը կոչվում է համակցված արգելակում: Այն ապահովում է ամենակարճ արգելակման հեռավորությունը և զգալիորեն նվազեցնում է հետևի անիվների սահքը:

Անջատված կցորդիչով հետևի անիվի կտրուկ արգելակումը շատ հաճախ հանգեցնում է հետևի անիվի տեղապատմանը և սահքի, ինչը իր հերթին հանգեցնելու է կայունության կորստին:

Հաճախակի և հատկապես կտրուկ արգելակումներից պետք է խուսափել, եթե դա բացարձակապես անհրաժեշտ չէ:

Հիշեք, որքան արագ է մոտոցիկլետը շարժվում, այնքան մեծ ճանապարհ է այն անցնելու արգելակումը սկսելու պահից մինչև լրիվ կանգառը:

Կողասահում շրջադարձերին

Արգելակի ոտնակին կամ լծակին չափազանց ուժեղ սեղմումը կարող է հանգեցնել անիվների արգելափակմանը և կողասահմանը:

Հնարավորության դեպքում, շրջադարձ կատարելուց առաջ նվազեցրեք արագությունը և դադարեցրեք արգելակումը: Շրջադարձ կատարելիս խուսափեք կտրուկ արգելակումից և շարժիչի արագության փոփոխությունից:

Նման գործողությունները կարող են հանգեցնել անիվների սահելուն: Ցանկացած անիվի սահելը կարող է հանգեցնել վերահսկողության կորստի:

Եթե փոքր արագության (մինչև 10-20 կմ/ժամ) դեպքում արգելափակված անիվներով կողասահում եք, մի փոքր բաց թողեք արգելակների կառավարման սարքերը, կատարեք ուղղիչ գործողություններ դեկով, մինչև վերահսկողությունը լիովին վերականգնվի: Այնուհետև վերսկսեք արգելակումը:

Եթե կադասահումը տեղի է ունենում 20 կմ/ժ-ից բարձր արագությամբ, այն դառնում է անվերահսկելի: Լավագույնն է ոչինչ չձեռնարկել և սպասել, մինչև մոտոցիկլետը լիովին կանգ առնի:

Հետևի անիվի կողպման արգելակումը կարող է օգտագործվել շարժման ընթացքում արագ շրջադարձ կատարելու համար:

Անցում խոչընդոտների վրայով

Որոշ իրավիճակներում ոչ արգելակումը, ոչ էլ խոչընդոտի շրջանցումը չեն կարող համարվել այն հաղթահարելու հարմար միջոց: Եթե խոչընդոտը հաղթահարելու այլ տարբերակ, քան դրա վրայով անցնելը, իսկապես չկա, պատրաստվեք. կարգավորեք շարժման հետագիծը, որպեսզի այն հասցնեք հնարավորինս մոտ 90° անկյան տակ: Խոչընդոտին մոտենալուց հետո մի փոքր կանգնեք ոտքերի վրա, իրանը մի փոքր տեղափոխեք թամբի հետևի մաս և մի փոքր ավելացրեք «գազը»:



Նկ. 6. Խոչընդոտների հաղթահարման կեցվածքը

Անվաղողի պատռվածք


Եթե դա տեղի է ունեցել, ամուր պահեք դեկը և հնարավորինս ուշադիր վարեք մոտոցիկլետը՝ դանդաղորեն նվազեցնելով «գազը»: Մի՛ անցեք ստորին փոխանցմանը կամ մի՛ արգելակեք. զանգվածի հանկարծակի տեղափոխումը կարող է խախտել շասսիի արդեն իսկ փխրուն հավասարակշռությունը: Թուլացրեք «գազը», աստիճանաբար դանդաղեցրեք ընթացքը և կանգ առեք:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Պատռված անվադողով արգելակելու փորձը կարող է հանգեցնել նրան, որ այն դուրս կգա անվահեցից, և դուք կկորցնեք կառավարումը, ուստի լավագույն լուծումը ինքնագլորման արգելակումն է հեռացնելով «գազը»:

Կցորդիչի ճոպանի վնասվածք

Եթե մոտոցիկլետը կանգնեցնելիս կցորդիչի ճոպանը վնասվում է, արագ արգելակեք՝ շարժիչը անջատելու միջոցով: Որոշ մոտոցիկլետներ ունեն հիդրավլիկ կցորդիչներ: Կցորդիչը միացնելու և անջատելու համար կցորդիչի փոխարեն օգտագործվում է նրա ներսում գտնվող հեղուկի ճնշումը: Այս հեղուկի հանկարծակի կորուստը կառաջացնի նմանատիպ ազդեցություն, ինչ վնասված կցորդիչների դեպքում՝ մեխանիզմը կխափանվի: Արտակարգ միջոցառումները նույնն են, ինչ վնասված կցորդիչի դեպքում (շարժիչը կանգնեցնելը):

Եթե վարման ընթացքում վնասվել է կցորդիչի ճոպանը, ապա պետք է օգտագործեք դեկի բռնակի ձախ կողմում գտնվող Killswitch շարժիչի անջատիչը (Նկ. 7):



Նկ. 7. Շարժիչի անջատման կոճակը դեկի բռնակի վրա

Հետևի անիվի այս ու այն կողմ շարժումը և դեկի թափահարումը

Խնդիրը կապված է մոտոցիկլետի կառավարման հետ: Հետևի անիվը համեմատաբար դանդաղ է այս ու այն կողմ շարժվում, իսկ դեկի (և առջևի անիվի) թափահարումը տարածված է:

Այս երևույթների համար կան բազմաթիվ հնարավոր պատճառներ, բայց ամենից հաճախ դրանք առաջանում են մոտոցիկլետի վրա քաշի վատ քաշիման կամ անպատշաճ կառավարման պատճառով: Այս գործոնները խանգարում են շասսիի պատշաճ աշխատանքին: Օրինակ՝ շրջադարձի ժամանակ արագացնելիս, երբ մոտոցիկլետը դեռ չի ուղղվել թեքվելուց հետո: Մեկ այլ պատճառ են համակարգի մեխանիկական խնդիրները, ինչպիսիք են դեկափողակի առանցքակալների կամ ճոճանակի առանցքակալների խիստ մաշվածությունը, թերփչված կամ խիստ մաշված անվադողերը:

Երբ մոտոցիկլետի առջևի կամ հետևի հատվածը սկսում է այս ու այն կողմ շարժվել, ավելի ամուր բռնեք դեկը, մինչդեռ ձեռքերի դիրքը պետք է ազատ մնա շարժման համար: Դրանից հետո նրբորեն փակեք «գազը», որպեսզի աստիճանաբար դանդաղեցնեք ընթացքը: Մի օգտագործեք արգելակներ և մի փորձեք արագացնել ընթացքը: Երբեմն, հատկապես, եթե հետևի անիվը այս ու այն կողմ է շարժվում, մարմնի քաշը մի փոքր առաջ տեղափոխեք (թեքվեք դեպի բաքը)՝ օգնում է:

3. Վարորդի հոգեբանական տրամադրվածությունը

Մարտական իրավիճակում վարորդի մտավոր գործունեության առանձնահատկությունն արտահայտվում է նրա գործողությունների և վարքի ճշտությամբ, մարտական իրադրությունում հանկարծակի առաջացող խնդիրների լուծմամբ:

Հոգեբանական հմտությունները անմիջական ազդեցություն են ունենում մարտական պայմաններում սպորտային մոտոցիկլետով (պիտբայք) շարժման արագության ընկալման վրա:

Հոգեբանական հմտություններն են. կոորդինացիան, ուշադրությունը, կենտրոնացումը, կերպարային պատկերացումը, ընկալունակությունը, հիշողությունը, վախի կառավարումը, վստահությունը:

Մոտոցիկլավարը պետք է ունենա լավ կոորդինացիա՝ բարձր ռիսկի պայմաններում մոտոցիկլետի կառավարման մեխանիզմները (դեկ, փոխանցման ոտնակներ, արգելակներ) կառավարելու և զգոն ու ճանապարհային միջավայրի վրա կենտրոնացած մնալու համար: Մոտոցիկլետի կառավարման բանալին վարման վրա լիովին կենտրոնանալու ունակությունն է:

Կենտրոնացումը և ուշադրությունը կախված են ձեր ֆիզիկական վիճակից: Արյան մեջ շաքարի ցածր մակարդակը նվազեցնում է վստահությունը: Մթերան ու վախը դրսևորվում են ֆիզիոլոգիական ձևով: Այս վիճակում բոլոր մկանները՝ որովայնի մկանները, ուսերը և ձեռքերը, լարվում են, և շնչառությունը դառնում է անհավասար: Մարմինն ավելի արագ է հոգնում, և հիշողությունը խափանվում է:

Դուք պետք է սովորեք ինքնագնահատել ձեր մարմինը և պահպանել ձեզ լավ ֆիզիկական վիճակում:

4. Մոտոցիկլավարի հանդերձանքը

Մարտի ընթացքում վարորդը պետք է լինի ամբողջապես հանդերձավորված (սաղավարտ, զրահաբաճկոն, գենք և այլն), միևնույն ժամանակ, վնասվածքներից խուսափելու համար կարող են օգտագործվել լրացուցիչ պարագաներ, որոնք, որպես կանառն, կիրառվում են ընդհանուր նշանակության ճանապարհներով մոտոցիկլետները վարելիս:

Այսպիսի մոտոհանդերձանքը նախատեսված է անկման ազդեցությունը նվազագույնի հասցնելու և վարորդին վնասվածքից պաշտպանելու համար:

Մոտոցիկլավարների համար լրացուցիչ պաշտպանիչ հանդերձանքը պետք է հնարավորություն տա հեռացնել (հանել և վերատեղադրել) հագուստում գտնվող պաշտպանիչ ներդիրները: Բացի այդ վնասվածքները կանխելու համար արմունկների և ծնկների պաշտպանիչները, որոնք կրվում են զինծառայողի զինվորական համազգեստի վրայից՝ հոդերի կոտրվածքները կանխելու համար, պետք է նույնպես արագ հանվեն և փոխարինվեն:

Մարմնի մասերը, որոնք պահանջում են պաշտպանություն

Գլխին ստացված վնասվածքների ժամանակ հարվածը հանգեցնում է ամենալուրջ հետևանքների: Անկումների մեծ մասը տեղի է ունենում մոտոցիկլավարի ոտքերի վնասվածքի պատճառով: Մոտոցիկլավարի մարմնի ցցուն մասերն են ծնկները, արմունկները և ափերը, որոնք ռեֆլեքսիվորեն առաջինն են ստանում

հարվածը, երբ կորցնում է հավասարակշռությունը և սահում գետնին: Առավել ծանր է տուժում ուսը, անրակը, պարանոցը, ազդրերը և ողնաշարը: Ուստի սաղավարտի և պաշտպանիչ վահանակների առկայությունն անհրաժեշտ են այս մասերը պաշտպանելու համար:

Քամին աչքերը արցունքահոսեցնում է, ուստի դրանք պաշտպանելու համար անհրաժեշտ է ակնոցներ կրել (մոտոցիկլավարները պետք է ունենան հարվածակայուն ոսպնյակներով ակնոցներ): Պաշտպանիչ ակնոցները չպետք է ծածկեն ձեր տեսադաշտը և քամուց չտեղաշարժվելու համար պետք է ամուր տեղավորվեն ձեր սաղավարտի տակ: Դահուկորդների կամ հեծանվորդների պաշտպանիչ ակնոցները նույնպես ընդունելի են:

Կոշիկները նույնպես կարևոր դեր են խաղում վնասվածքների նվազեցման գործում: Կոճերին հասնող կոշիկները կամ կաշվե ճտկակոշիկները պաշտպանում են տարբեր վթարներից, այդ թվում՝ ճանապարհային փոսերից թռչող քարերից, օգտագործված ԱԹՄ-ների օպտիկամանրաթելային մնացորդներից և մոտոցիկլետի արտանետման խողովակներից առաջացող այրվածքներից: Ռետինե ներբանները կանխում են մոտոցիկլետի ոտնակների վրա սահքը: Վթարի դեպքում այդպիսի կոշիկները պաշտպանում են ձեր ոտքերը կապտուկներից, հողախախտումներից և կոտրվածքներից:

Ընկնելիս ձեռնոցները պաշտպանում են ձեռքերը քարերից առաջացող քերձվածքներից և կապտուկներից, ինչպես նաև քամու, արևի և ցրտի ազդեցությունից: Խորհուրդ է տրվում ունենալ մի քանի տեսակի ձեռնոցներ, որոնք տարբերվում են հաստությամբ և պաշտպանության մակարդակով, հարմար են տարբեր շրջակա միջավայրի պայմանների և ճանապարհային պայմանների համար:

5. Գործողություններ FPV դրոնների հարվածների դեպքում

Մարտական գործողությունների ընթացքում մոտոցիկլավարներին խոցելու համար լայնորեն օգտագործվում են FPV դրոններ, այդ թվում՝ կոմերցիոն նշանակության վերասարքավորված նմուշներ: Փոքր չափերը, բարձր ճշգրտությունը և ոչնչացման միջոցների լայն ընտրանին FPV դրոնների կիրառումը դարձնում են արդյունավետ զենք:

Քվադրոկոպտերային տիպի հիմնական FPV դրոնները նախատեսված են բեկորային զինամթերքի (ձեռքի նռնակներ, ինչպիսիք են ՔԴ-5, Փ-1, БОГ-17 բեկորային նռնակների կրակոցներ, հրկիզող խառնուրդներ) վարնետման միջոցով շարժվող խումբը կամ մեկ մոտոցիկլավարին հարվածելով ոչնչացնելու համար:

Կամիկաձե տիպի քվադրոկոպտերային FPV դրոնները հազեցած են կոմունյալ տիվ մարտագլխիկներով (ՔՊԴ-ներից: ՔԴ-7Մ, ՔԴ-7Մ, ՔԴ-9Ը, ՔԴ-18) և նախատեսված են տեխնիկական միջոցներին ու վարորդներին հարվածելու (խոյահարելու) միջոցով ոչնչացնելու համար, այդ թվում՝ մոտոցիկլավարի մեջքին կամ մոտոցիկլետի կողային մասին:

Երբ գործարկվում է դրոն - դետեկտորը կամ տեսողականորեն հայտնաբերվում են FPV դրոնը, անհրաժեշտ է որքան հնարավոր է արագ ցրվել, ինչը մոտոցիկլավարի համար նշանակում է արագության և հեռավորության մեծացում:

Եթե մոտոցիկլետը հազեցած է ՌԷՊ համակարգով, խլացուցիչը պետք է ակտիվացվի և աշխատի մինչև հարձակման ավարտը:

FPV դրոնի հետապնդման ժամանակ կարևոր է պահպանել հանգստություն: Սպասեք մինչև անօդաչու թռչող սարքը մոտենա, այնուհետև արագ դանդաղեցրեք ընթացքը մինչև կանգ առնելը և մոտոցիկլետը մանևրեք հարձակման ուղուց դուրս ձախ (կամ աջ) :

Նպատակին (մոտոցիկլավարին) հասնելու համար FPV դրոնների հարձակումները սովորաբար իրականացվում են 2-3 ԱԹՄ-ների միջոցով՝ երկու ալիքով: Օպտիկամանրաթելային ԱԹՄ-ները սովորաբար հարձակվում են առանձին-առանձին, և ՌԷՊ-ը դրանց դեմ անարդյունավետ է: Հաջող խուսանավման, կամ մոտոցիկլետով հետագա մանևրի անհնարինության դեպքում, անհրաժեշտ է ընտրել բարենպաստ դիրք (թաքնվել), տեսողականորեն գտնել թռչող ԱԹՄ-ն և փորձել նշանառու կրակով ոչնչացնել այն, կամ, որպես վերջին միջոց, թաքնվել մոտոցիկլետի ետևում:

6. Խուսավարման ժամանակ կրակի վարում

Մոտոցիկլետից կրակ վարելիս կիրառվում են հետևյալ հնարքները.

ընթացքից կրակի վարում՝ հետևի նստատեղին առկա հրաձիգի միջոցով (2 անձի համար նախատեսված մոտոցիկլետների մոդելների համար) կամ մոտոցիկլետի վրա տեղադրված է հրաձգային զենքի (ինքնաձիգ, գնդացիր) հատուկ ամրացման միջոցով, որը վարորդին թույլ է տալիս կրակ վարել մեկ ձեռքով;

կարճ կանգառներից կրակի վարում՝ 4-8 վայրկյան տևողությամբ հրաձգային զենքերից մի քանի կրակահերթեր արձակելով, կանգառների տեղերը ընտրվում են անվտանգ ապաստարանների ետևում;

կրակի վարում տեղից՝ իրականացվում է անվտանգ ապաստանից այն բանից հետո, երբ մոտոցիկլավարը պետք է ծածկի խմբի առաջխաղացումը:

Յուրայիններին նույնականացնելու համար օգտագործվում են տարբեր գույների կտորներ և ժապավեններ՝ կախված հրամանատարների կողմից սահմանված նույնականացման նշանների:

«Երկրորդ համարների» (2 մարդու համար նախատեսված մոտոցիկլետային մոդելների պարագայում) մարզումները, օրինակ՝ ուղքերով մոտոցիկլետի թամբից բռնվելու, միաժամանակ շարժման ընթացքում մարմինը հավասարակշռության մեջ պահելու (առաջ թեքվելու, իսկ արգելակելիս բռնվելով վարորդից թիրախին կրակելու վարժանքը) կազմակերպում է հրամանատարը՝ գրոհման ենթակա տարածքի լանդշաֆտը կրկնող տեղանքում հարձակողական գործողություններին նախապատրաստվելու համար:

7. Առաջխաղացում կիրառման շրջան

Հարձակողական գործողությունների ժամանակ մոտոցիկլետային խմբերը կարող են առաջ շարժվել դեպի կենտրոնացման, սպասման շրջաններ, ելման դիրքեր, հավաքման և մարտակարգի վերակազմավորման կետեր:


Առաջ շարժվելիս անհրաժեշտ է ընտրել անսպասելի երթուղիներ և մոտեցումներ թշնամու դիրքերին (խիտ բուսականությամբ բացատներ, անտառապատ տարածքներ, բնական և արհեստական խոչընդոտներ, տեղանքի ծալքեր ու հակառակորդի կրակի կույր գոտիներ), հաշվի առնելով օգտագործվող սպորտային մոտոցիկլետների տեխնիկական հնարավորությունները (մանևրելու ունակություն, առավելա-

գույն արագություն, անցանելիության ունակություն) և վարորդների պատրաստվածությունը:

Առաջխաղացումը պետք է իրականացվի երկու կամ երեք մոտոցիկլավարներից բաղկացած խմբերով թաքստոցից թաքստոց արագ նետումներով:

Առաջխաղացման ընթացքում կարող են օգտագործվել կրովի կամ մոտոցիկլետների վրա տեղադրված ՌԷՊ համակարգեր՝ FPV դրոններից պաշտպանվելու համար:

Թշնամու ԱԹՍ-ները հայտնաբերելու համար մոտոցիկլետի ղեկին կարող են տեղադրվել դրոն-դետեկտորներ:



Նկ. 8. FPV դրոնների ազդեցության անվտանգության գմբեթ ստեղծելու համար տարբեր հաճախականության տիրույթների ՌԷՊ սարքավորումներ օգտագործող մոտոցիկլավար խմբի շարակարգման տարբերակ


Կենտրոնացման շրջանում մոտոցիկլետային խմբերը տեղակայվում են գրոհից առաջ, թշնամու կրակի գոտուց դուրս, օդային և ցամաքային հայտնաբերումից թաքնված և ապաստարաններում քողարկված :

Սպասման շրջանը զբաղեցվում է գրոհը կազմակերպելիս, նախքան ելման դիրքերին անցնելը: Այն ընտրվում է ապագա գործողությունների տարածքի այն վայրում, որն ապահովում է մոտոխմբի թաքնված գտնվելու վայրը մինչև գրոհի սկիզբը: Սպասման շրջանը պետք է ունենա թշնամուց թաքցված դիրքերի մուտքեր:

Խումբը ելման դիրքերը զբաղեցնում է գրոհից անմիջապես առաջ՝ լրիվ մարտական պատրաստականությամբ:

8. Հիմնական մարտավարական հնարքները


Գրոհային գործողություններ իրականացնելիս կարող են կիրառվել հետևյալ տակտիկական հնարքները՝ մեկ թևի շրջառում, երկու թևի շրջառում, շրջանցում, ճակատային հարձակում, կեղծ հարձակում: Հնարքների մտահղացումն այն է, որ մոտոցիկլավարների մի ենթախումբ, որը գրոհում է ճակատից, ինտենսիվ կրակով, ստորաբաժանումների կրակային միջոցների աջակցությամբ (ԱԴՀ հաշվարկ, ականանետներ և այլն) և ԱԹՍ-ների միջոցով, ծածկում է մոտոցիկլավարների մեկ այլ խմբի հարձակումը, որը գրոհում է առավելագույն արագությամբ թևից (թևերից) կամ թիկունքից, մինչդեռ ինտենսիվ կրակը ընթանում է:



Նկ. 9. Շրջառման տարբերակ, երբ հակառակորդի դիրքերը գրոհում են թևերից

9. Ինժեներական արգելափակոցներ


Ներկայումս ցանկացած տեսակի մարտական գործողություն պահանջում է ինժեներական զինամթերքի օգտագործում: Ինժեներական զինամթերքի (ԻԶՄ) առանձնահատկությունը դրանց բազմազանությունն է: Ժամանակակից ԻԶՄ-ները բարդ կառուցվածքներ են, որոնք օգտագործում են տարբեր մեխանիզմներ, էլեկտրոնիկա և զինամթերքի դետալների կոստրուկտիվ որոշումներ, որոնք հնարավորություն են տալիս իրականացնել պայթեցման նոր գործընթացներ և երևույթներ: Թե՛ հակատանկային, և թե՛ հակահետևակային ականները, նախատեսված են ինժեներական խոչընդոտներ ստեղծելու համար, մասնավորապես՝ շարժական գրոհային խմբերի, այդ թվում՝ մոտոցիկլետավորների շարժման հնարավոր ճանապարհի երկայնքով:



Նկ. 10. MOH-50 բեկորային ականներով արգելապատնեշներ տեղադրելու տարբերակ մոտոխմբի երթուղու ուղղությամբ

Մոտոցիկլավաները (pitbike) պետք է իմանան, որ թշնամին կարող է ականապատել ոչ միայն նեղ տեղանքը՝ առանձին հակահետևակային ականներով կամ ականների կույտերով, այլև ճանապարհների այն հատվածները, որոնց պայթեցումը կհանգեցնի մոտորացված շարասյուների առաջխաղացման կանգնեցմանը և հեշտ հնարավորություն կընձեռի դարանակալման ու հրաձգային զենքերով ոչնչացման համար:

Հակառակորդի ականների կամ ֆուգասների հետ հանդիպելու ամենահավանական վայրերն են՝ կտրուկ փակ շրջադարձերը, բնակեցված տարածքներում նեղ անցումները, ճանապարհային և կամրջատիպ կառույցները, ինչպես նաև այն ճանապարհային հատվածները, որոնք առավել հարմար են երթևեկության համար:




Նկ. 11. ՊՕՄ3-2Մ (ՊՕՄ3-2) ականները ծառի վրա ոչ ստանդարտ ուղղաձուլ տեղադրելու տարբերակ:

Ճանապարհների ականապատման եղանակներ 1. Մեղմման գործողությամբ ական; 2. Առձգիչ մետաղալար; 3. Մագնիսային ական; 4. Կառավարվող ֆուգաս:


Կարևոր է հիշել, որ հակառակորդը կարող է օգտագործել տարբեր հնարքներ ականները տեղադրելիս, և ակտիվացող պայթուցիչները կարող են գործարկվել կամ համակցված գործողությունների, կամ մետաղալարերի ու ճուպանների լարվածությունից:

Պարզ օրինակ է ազդանշանային ականը, որն առավել գրավիչ է, երբ օգտագործվում է որպես «հրավառություն»: Հաջորդական բազմագույն բոցկլտացող աստղիկները, որոնք ուղեկցվում են ձայնային ազդանշանով, ուրախացնում են շրջապատողներին: Սակայն հակառակորդի ձեռքերում ազդանշանային ականը կարող է վերածվել բեկորներով, մեխերի գլխիկներով կամ գնդիկավոր կրիչներով լցված ականային թակարդի:



Նկ. 12. Տրիբուներով և փշալարերի շերտով ագդանշանային ական տեղադրելու տարբերակ

Սովորական օգտագործման դեպքում ագդանշանային ականը պայթում է և մետաղական իրանի ճեղքման պատճառով առաջացնում է խոցիչ բեկորային դաշտ :



Նկ. 13. Տեղանքի նեղ հատվածում ագդանշանային ծուղակ տեղադրելու տարբերակ

10. Եզրակացություն

Մեթոդական առաջարկներում շարադրված դրույթներն ուսումնասիրելով գրոհային ստորաբաժանումների հրամանատարները, կազմակերպելով ներկայացված նյութի տարածումը և տրված օրինակների գործնական ցուցադրումը, պետք է ձեռնարկեն համապարփակ միջոցներ անձնակազմի կորուստները նվազեցնելու և մոտոցիկլետների անդառնալի կորուստները կանխելու համար:

Մարտական գործողությունների ընթացքում հարձակման հաջողությունը զարգացնելու համար մոտոցիկլետային խմբերի օգտագործման մարտավարությունը պետք է հիմնված լինի հակառակորդի կրակային ներազդեցության, տեղանքի

վերլուծության և տեղակայված ինժեներական արգելապատնեշների առկայության վրա:

Յուրաքանչյուր մոտոցիկլավար պետք է գիտակցի, որ մարտական առաջադրանքը կատարելու համար իր և տրանսպորտային միջոցի բարձրորակ պատրաստվածությունը ամբողջ ստորաբաժանման հաջողության գրավականն է:

Աղբյուրը. https://vk.com/wall-223252178_4540?ysclid=mg0t34jbsq285325868